# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
# ՀՐԱՄԱՆ

№ 5003-Լ

## ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն.

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ**

Հաստատել ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ**

9/6/2024

X

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN ARPINE 6404940545

**Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
պարտականությունները կատարողի
2024 թվականի սեպտեմբերի «06»-ի N 5003 -Ա հրամանի

**ԾՐԱԳԻՐ**

**ՀՀ ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների**

**1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները**

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի աշխատանքների ծավալների ավելացմամբ պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան փորձագետ:

**2. Փորձագետին ներկայացվող պահանջները**

1) բարձրագույն կրթություն.
2) հայերենի իմացություն.
3) համապատասխան ոլորտի իրավական ակտերի իմացություն և անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
4) բավարարում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պահանջին.
5) հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պետական գնումների բնագավառում ՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:
6) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը**

Փորձագետը ներգրավվում է 3 (երեք) ամիս ժամկետով:

**4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը**

1) իրականացնում է Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների գնումների գործընթացը և ցուցաբերում է մեթոդական օժանդակություն,
2) իրականացնում է Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների գնումների պլանի կազմման աշխատանքները,
3) իրականացնում է Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով գնման հայտերի ստացման աշխատանքները,
4) իրականացնում է գնման ընթացակարգերի և դրանց առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների, ինչպես նաև գնումների շրջանակներում

նախապատրաստված փաստաթղթերի վերաբերյալ եզրակացության ներկայացման աշխատանքները,

5) իրականացնում է Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների կարիքների համար գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման նպատակով ձևավորված գնահատող հանձնաժողովների քարտուղարի պարտականությունները:

**5. Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները**

1) փորձագետի աշխատանքը գնահատվում է եռամսյակի վերջում.

2) կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

**6. Աշխատանքի գնահատման չափանիշները**

1) Բաժնի պետին ներկայացվել են կատարված գնման գործընթացների վերաբերյալ հաշվետվություն և գնման գործընթացների ընթացքում գործողությունների հիմքերի մասին համապատասխան փաստաթղթեր և համապատասխան եզրակացություններ,

2) գնումների պլանի, գնման առարկաների, գնման առարկաների տեխնիկական բնութագրերի համապատասխանության, գնման ընթացակարգերի, գնումների գործընթացի վերաբերյալ կատարվել են վերլուծություններ, ուսումնասիրություն և գնահատում,

3) Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով գնման հայտերը ստացվել և հավաքագրվել են,

4) Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների կարիքների համար գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման նպատակով ձևավորված գնահատող հանձնաժողովում ներգրավվել է որպես քարտուղար: